ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱ ՖԻԴԱՆՅԱՆԻՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԾՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ
ԼԻԼԻԹ ՎԻՐԱԲՅԱՆԻՑ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում, 2024 թվականի ապրիլի 2-ից մայիսի 5-ը, իրականացրել եմ ներքոգրյալ աշխատանքները.

1. իրավական փորձաքննության եմ ենթարկել Իրավաբանական վարչության կողմից ներկայացված ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների նախագծեր՝ դրանց վերաբերյալ ներկայացնելով կարծիքներ:

2. Լրամշակել եմ ՀՀ կառավարության որոշումների նախագծեր, այդ թվում՝

1) Հրագործական արտադրատեսակների արտադրության, ներմուծման կամ արտահանման լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.

2) Հրագործական արտադրատեսակների առևտրի (իրացման), պահեստավորման կամ տեղափոխման (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների I և II դասերի, որոնց մասով լիցենզավորման պահանջը վերաբերում է միայն պահեստավորմանը և տեղափոխմանը) լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.

3) Հրագործական արտադրատեսակների կիրառման (շահագործման) (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների I և II դասերի) լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի N 755-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

5) Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրության, ներմուծման կամ արտահանման (բացառությամբ ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող նյութերի և պայթեցման սարքավորումների, ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող արտադրատեսակների) լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.

6) Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի, պահեստավորման կամ տեղափոխման լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.

7) Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների կիրառման կամ պայթեցման աշխատանքների կատարման լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.

3. Ներկայացրել եմ իրավական պարզաբանումներ Իրավաբանական վարչություն ուղարկված գրություններում բարձրացված հարցերի վերաբերյալ, ինչպես նաև տրամադրել եմ իրավական խորհրդատվություն:

Լիլիթ Վիրաբյան

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները գնահատում եմ

«Գերազանց»

ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյան

«05» մայիսի 2024թ.